

կամ ՚ի Յոպպե, յորս անկան խուճապաւ եւ այլք. եւ զի հասեալ էր առ նոսա գոյժ մահուան Ենրիկոսի Ջ կայսեր († 28 սեպտ. 1197), Ալամանք հանդերձէին դառնալ յետս յերկիր իրեանց, ապախտ առնելով զաղաչանս այլոց. եւ թէպէտ ոչ առ ժամայն մեկնեցան, այլ իբրեւ առ անփութութեան, հակառակութեան եւ շուայտութեան զօրավարաց եւ զօրականին՝ մատնեցաւ եւ Յոպպե ՚ի ձեռս այլազգեաց (11 նոյեմ. 1198), մեծաւ կոտորածի քրիստոնէից, փութացան այնուհետեւ մնացորդք նոցին դառնալ յետս, ընդ որս եւ առաջնորդ նոցին քարտուղարն Կոնրադ. յանձն առնելով զգործ թագադրութեան Լեւոնի, մինչ ՚ի Պերուօ էր, յիւր համանունն Կոնրադ Վիդդէլսպախ, արքեպիսկոպոս Սոգունտիոյ եւ ծիրանաւոր կարդինալ Ս. Սաբինայ, այլ եւ նախապատիւ ՚ի կարդինալս:

Բ. Թագրնկալութիւն յինքնակալէն Յունաց, եւ ինդիր միաբանութեան ընդ եկեղեցւոյ նոցին

Մինչդեռ դանդաղէին արեւմտեայքդ ՚ի կանգնել զթագաւորութիւն Հայոց, համբան տարածանէր յընդհանուրս. եւ մեծամեծ իշխողք աշխարհաց՝ որք երբեմն ծառայս եւ ապստամբս համարէին զՀայս եւ զՊարոն նոցին, սկսան ելեւելս զիրերօք առնել՝ ՚ի պսակել զնա թագիւ. յայտ է թէ ոչ այնքան ՚ի պատիւ նմին, որքան յոչ անպատուութիւն ինքեանց, իբրու անտեսից եւ յաշաղկոտաց արդեանց եւ զօրութեան այնպիսոյ մերձաւորի, որ անփոյթ արարեալ զինքեանս՝ ՚ի հեռաւորաց ինդրիցէ զարժանաւորն ինքեան պսակ⁵⁷: Վասն որոյ փութացաւ կայսրն Բիւզանդիոյ Ալէքս Գ՝ կանխել առաքել հանդերձ այլովք մեծագին ընծայիւք, «եւ թագ գեղեցիկ ոսկւով եւ ակամբք պատուականօք ընդելուզեալ»⁵⁸. զի մի՛ յառաջադէմ քան զինքն գտանիցին արեւմտեայքն. եւ եթէ հնար է՝ մի՛ եւս նոցա, այլ ինքեան իբրեւ մերձաւորի՝ մատուցի լճութիւն թագաւորին Հայոց, որպէս երբեմն նախորդաց նորին Թորոսեանց:– Լուեալ եւ մեծի ամիրապետին Մսլիմաց զհամբան, իբրեւ արեւելեան իշխան՝ ինքեան իսկ վայելուչ վարկանէր պատուել զԼեւոն, եւ առաքեաց ընծայս ծանրագինս

⁵⁷ Շարայարող եւ աւարտող Պատմագրութեան Միխայելի Ասորւոյ սոյնպէս խորհրդածէ վասն Լեւոնի. «Ել անուն նորա ընդ ամենայն երկիր եւ փութացան պսակել զնա տունն Յունաց եւ տունն Ֆռանկաց. ըստ որում առաքեցին նմա թագ յիւրաքանչիւր կողմանց, ՚ի պարծանս իրեանց առնելով զայն»:

⁵⁸ Կիրակոսի պատմչի են այս բանք: